ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիւրքիոյ և Ռուսիոյ համար տարեկան 23 ֆրանգ
Ուրիշ ամեն տեղերի » » 20 »
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ վոստի ծախքը։
Բաժնեգիները կանխիկ կը վճարուին։ Վեցամսեայ կամ եռամսեայ բաժնորդութիւնները ալ կընդունուին, առանց ուրէ յաւելման բաժնեգնին վրայ։
Խմբագիր-Տնօրէնին հետ կարելի է տեսնուիլ խմբագրատունը ամեն օր կէսօրէնյետոյ, ժամ 2էն մինչև 4 միայն։

Ա. ՏԱՐԻ ԹԻՒ 20

1885 ՀՈԿՏԵՄԲԵՐ 24
(ՀՈԿՏԵՄԲԵՐ 9 Հ. Տ.)
ՁՈՐՆԿՐՃԱԹԻՒ

Կը հրատարակուի Դշ. և Երք. օրեր

ՊԱՏՄԱՆՆԵՐ

Ծանուցումներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Ծանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։
Նամակ կամ ծրար պէտք է ղրկել խմբագրութեան հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*, rue Arménie, 2 (Hôtel Forer), MARSEILLE.

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Hôtel Forer).

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Աշնանապաշտպանութեան դէմ պատիժ. —Քաղաքական տեսութիւն. —Քմիռնացիների հանրագիրը. —Արեւելեան խնդիր. —Ծրանսա. —Տեղական. —Արտասահմանի լուրեր. —«Արմենիա»ի պատասխանները. —Առեւտրական. —Յանուցմներ։

ԱՆՁՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԷՄ ՊԱՏԻԺ

Կիսամեակ որ սեպտ. ամսի վերջեր մի տարօրինակ դէպք եւս պատահեր է Վանի մէջ։

Մի քանի թիւրքեր դիմեցած կը մըտնեն գիշերային Ա. յգեստանի մէջ Բայնկոյսներ թաղը Ատամպայենց տունը և Ատամպալի կոլիճ տղուն երիտասարդ Համբարձումի վրայ յարձակելով կսկսանին սպանել զինք տանկոի մէջ փնացած տեղ։ Սակայն ճարտար և քաջասիրտ տղան յարմար ժամանակին արմինալով կընդդիմադրէ, խլելով յարձակողների մէկի ձեռքէն դաշոյնը։ Ա.յս իրարանցումի մէջ, յարձակող թիւրքերէն մին դաշունով այնպէս կը զարնուի որ խոկոյն կը մեռնի և երբ Համբարձումի հանած աղմուկէն անկոչները կարծենան և օգնութեան կը վազեն, դուրէն երենց մեռել առնելով կը յաջողին փախչիլ։ Կարիճ Համբարձումը, գրեթէ հրաշքով, կը յաջողի ազատել իր կեանք երկայրի դաշոյնների և բէխլիվրնեբի հարուածներէն որք իր անկողին բոլորովին բզկտած են։

Մինչեւ այստեղ գրեթէ տարօրինակ բան չկայ։ Անէն տեղ ալ կրնան պատահիլ դաղտնի թշնամներ, սպանութիւնները և այլն։ Բայց ինչ կը կարծէք. միթէ Համբարձումը դաղտի ձեռքէն ազատուելով պիտի կրնար ազատել իր կեանք։ Ո՛չ. այժմ կատաւարութիւնը բոլոր բանտարկեր է զինք և կաշխատի իր մահապարտ վճիռ հանել տալ, վասն զի Համբարձումը իր անձ պաշտպանելու համար ստիպուեր է մի դող թիւրք սպանել։ Ո՞ւր է այդ սպանուածի տէրը. ինչո՞ւ այդ թիւրք զինուած և խմբով եկեր յարձակեր է գիշերային այդ երիտասարդի անկողնին վրայ. հարցնող մինուոյն չկայ. կատաւարութիւնը թէ՛ տեսանող և թէ՛ դատաւոր եղած, կը գտնէ և կը դատապարտէ Համբարձումը, որ, մի քրիստոնեայ սորուկ, յանդգներ է իր անձ պաշտպանել մի տասնակ թիւրքի դէմ։ Բնականապէս, թիւրքեր և քուրդեր կատաւարութեան այս պաշտպանողական և սխատու ընթացքէն քաջալերուած, ամեն տեսակ չրհանքներ կանեն քրիստոնեայ հայերին. կը կողոպտեն նոցա տասցուածքը, կը բռնաբարեն պատիւը, կսպաննեն, ամեն ինչ կանեն համարձակ և աներկիւղ դի գիտեն որ թիւրք կատաւարութիւնը կը պաշտպանէ զինեն և կը պատժէ հայերն եթէ յանդգնին դիմադրել երենց։

Ոչ թէ քուրդերը մի անդիմադրելի ղօրութիւն, քաջութիւն ունին և այդ պատճառով է որ կը յաջողին միշտ հարատահարել, կողոպտել և կոտորել հայերն, այլ վասն զի մահմէտական լինելնուն համար, և թիւրեւս ուրիշ նկատումներով ալ, թիւրք կատաւարութիւնը միշտ երենց կողմն ունին, որ զիրենք անպատիժ թողով կը քաջալերէ միշտ չարանալ երենց այդ ընթացք և ջնաջել հայերին։ Հայաստանի հայերը այնչափ քաջութիւն, այնչափ ոյժ կրնան ունենալ որ զիրենք պաշտպանեն հարատահարող և ուտոկան քուրդերի և թիւրքերի դէմ, եթէ միայն թիւրք կատաւարութիւնը թոյլատրէ նոցա անձնապաշտպանութեան իրաւունքը։

Աստուածայենի դէպքը առաջինը և վերջինը չէ. այլ բազմաթիւներէն մէկը։

Դեռ այս տարի հազիւ արձակուեցաւ բանտէն Լմեցի Թովմասը, իր հեւանգութեան պատճառով և երաշխաւորութեան տակ առնուելով։ Ինչպէս յայտնի է լրագիրը կարդացողներին, Թովմասը վան քաղաքէն կը վերադառնար իր դիւղ, երբ ճանապարհին վրայ իր գիւղացի մի նշանաւոր քուրդ սպառազինուած յարձակեցաւ Թովմասին վրայ կողոպտելու և սպաննելու համար։ Թովմաս, այդ անգէն և խեղճուկ գիւղացի հայը, յաջողեցաւ խլել մի դաշոյն կարճ և դինուած քուրդին ձեռքէն և ինքզինք պաշտպանել։ Այդ միջոցին քուրդը կը կատղի, կռիւը կը սաստկանայ և երկու կողմէն հարուածներ փոխանակուած առնն, քուրդը կը փչէ իր վերջին շունչ։ Թովմաս գրեթէ 7 տարի չդիմացակաց չարաչար աչխատանքներու ենթարկուեցաւ. մեռնող քուրդի ազգականները սրձակ հանդարձակ դնացին Թովմասի տունը հիմնայատակ քանդեցին, ընտանիքին ջնաջեցին, այդինները, բոլոր կալուածները վառեցին այրեցին և այս կերպով դիւղին ամենանշանաւոր, հարուստ և ազդեցիկ հայ տուներէ մին մուրացիկ լինելու վիճակին հասուցին։ Այս ամենը լսեց և տեսաւ կառավարութիւնը. բայց ոչ մի պատիժ չտուաւ այդ յանդուգն և չարագործ քուրդերին որք միևնոյն ժամանակ ամեն օր քաղաք իջնելով կառավարութեան դուռը կերթային կուդային Լմեցի Թովմասը չարչարել տալու համար։

Ուրեմն թիւրք կառավարութիւնը անձնապաշտպանութեան դէմ պատիժ որոշած է մահ և, կամ եթէ մեղմացուցիչ շատ գօրաւոր պարագաներ ներկայանան և դատաստան վարձատրութիւն ալ լինի, երկար տարիներ չդիմացակաց չարաչար աշխատութիւն և իր բոլոր ստացուածներուն կողոպտուիլը։

Հիմա ո՞վ է մեղաւոր Հայաստանի մէջ հարատահարութիւնները վերջ չը դնելուն համար. քի՞րտը որ անուղղակի կը քաջալերուի իր ընթացք չդադրեցնելու. հա՞յը որ դինք պաշտպանելու ամեն միջոցներէ զրկուած է օրէնքով. թէ թիւրք կառավարութիւնը որ անձնապաշտպանութիւնը իրը սխալ կը պատժէ։

Մ. Փ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

(Շարունակութիւն 19 դ. բիւեղ եւ վերջ)

Դա չատ հասկանալի է. վասն զի եթէ Արեւելեան Ռումելիայի բնակիչները միանան Բուլղարիայի հետ, ուրեմն Բալկանեան թերակղզւոյ վրայ կը զօրանայ Ռուսաց ազդեցութիւնը, որ ինչպէս գիտէք, չօչափում է Գերմանացւոց շահերը. ահա ինչո՞ւ համար Եւրոպացիք, կամ աւելի ճիշդը ասել՝ Գերմանացիք գոռում են թէ «մենք ոչ ոքին թոյլ չենք տալ խախտելու Բերլինի դաշնադրութիւնը»։ Այս բողոքը կողմնակի կերպով ուղղած է ոչ թէ Բուլղարացւոց, այլ Ռուսաց դէմ։ Մենք ի բոլոր արտցանկանում ենք Բուլղարացւոց ազատութիւն և յաջողութիւն, Աստուած տայ որ քան գլաւորի վատ Հայքն եւս օրինակ առնեն բուլղար ազգից և ի զուր յոյսեր չտածեն Եւրոպական պետութեանց վերայ, այլ իւրեանց գլխի ճարը ինքեանք տեսնեն։ Ինչպէս մի մարդ, մի անհատական անձն իւր յատուկ ոյժերով հայթհայթում է իր ընտանեաց և զաւակաց կենսական պիտոյքները և ապրուստը, նոյնպէս և մի ամբողջ ազգ ինքն պարտական է հոգալ իւր ապագայ յարատեւութեան և դոյութեան մասին։ Հայոց ազգի դարեւոր անյաջողութիւնը այժմ մեր կարծեաց պատճառ կարող է լինել։

Այս քաղաքական տեսութեան մէջ մի քանի խօսք նուիրելով Եւրոպայի ընթացիկ դործերին, իմ նպատակս էր համոզել մեր այրենոց՝ ոչինչ չյուսալ Եւրոպայից, որոյ պետութիւնք՝ առ նախանձու դէպի միմեանս. չահատէր կրքերով առչորուած, պատրաստ են միմեանց համար փոս փորել ու միմեանց անդունդը գլորել։ Հրաժարուելով Եւրոպացւոց օգնութիւնից իրրեւ սատանայից, Հայերը Հայաստանում պարտական են կենդրոնացնել իւրեանց ոյժերը, այնտեղ պիտի տանեն իւրեանց նիւթական, բարոյական և փիլիսոփայական հարստութիւնները, ինչպէս հարկ անդամ կրկնել էր երջանկայիշատակ, անմահ Ներսէս պատրիարքը։ Ճուտով եմ, որ Կ. Պոլսոյ Սահմանադրութեան երեսփոխանները Մասեաց քաջերը չեն, որ կարողանան հեռուից Հայաստանը բարեկարգել։ Հերիք է Վիլիսոր Հիւգոյի և Լամարթինի կամ Բալզակի երկասիրութեանց վրայ վարժուիլ Պօլսեցի երիտասարդներին Բոսփորի ափերից՝ Հայաստան դառնալը. գզուելի են մեզ նոցա հայկատակները ի ցոյց Կ. Պոլսում ապրող Եւրոպացւոց։ Ռուսա-Հայաստանից և Կովկասից երբ հայ պատանիք դիմում են Ռուսաց մայրաքաղաքների համալսարանները, նոքա իւրեանց ուսման ընթացքը աւարտելով վերադառնում են դէպի անձկալի հայրենիք, վասն զի «հայրենեաց փուշն քաղցր է քան զօտարաց վարդ»։ Պօլսեցիք միթէ չեն հասկանում այս ճշմարտութիւնը. չատ լաւ են հասկանում, բայց որովհետեւ թուլասրտ են և սակաւ են միչտ վայելելու աշխարհիս բարիքը, վայելչութիւնը և եւրոպական ազգերի կենսական յարմարութիւնները, այս պատճառով հրաժարվում են Հայաստանից և իրօք ուրանում են ազգութիւնը։ Ձրչմարիտ հայրենասէր երիտասարդները Ռուսահայաստանում, Ռումանիայում, Բուլղարիա և այլ նորարոյս երկիրներում, խուռն բազմութեամբ յաճախելով եւրոպական համալսարանները, նոցա մէջ առացած պաչարը ու գիտութեան արդիւնքը բերում են հայրենիք և հաղորդում են իւրեանց անուս և անկիրթ հայրենակիցներին և այսպէս փառօք կառավարում են իւրեանց արբանեակդին և վեհ պարտականութիւնը ազգի վերաբերութեամբ. իսկ ազգերը՝ ըստ արժանւոյն գնահատելով իւրեանց բարերարների ազգասէր գործերը, ինչպէս մի մարդ ուսի ելան, խորտակեցին բանտարկ տաճիկների լուծը և հարկադրեցին եւրոպական պետութիւնքը ճանաչելու նոցա անկախութիւնը։ Օրինակելի չէ՞ արդեօք այս փոքր ազգու-

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՎԱՐԴԱՊԵՏԻ

(Շարունակութիւն 19-ի թիւից եւ վերջ։)

Նիկողայոս Թէք. Թէքէեանի

ՅԻՇԵՑՈՒԱԾՔ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

1883 թ. Նոեմբերի 13/25 ին.
Մոսկուա.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մարտ XIX դարի վերջերն էին, երբ մեր ազգային կեանքի մէջ սկսեցին ուժգին կերպով զգացուել ազգային ինքնագիտակցութեան ձգտումները։ Ազգային ինքնագիտակցութեան զարթօնքը, որ ամենից առաջ արտայայտուեցաւ մեր գրականութեան մէջ, ստիպեց մեր գրողներին ուշադրութիւն դարձնել մեր անցեալի պատմական կեանքի վրայ, որպէսզի նրանից քաղեն այն ամենը, որ կարող էր ծառայել նրանց ազգային գիտակցութեան զարգացման համար։ Ազգային գրականութեան մէջ սկսեցին ստեղծուել պատմական վէպեր, որոնց հեղինակները ձգտում էին ներկայացնել անցեալ դարերի մեր կեանքի տիպերը, մեր ազգային կեանքի պատմական պայմանները։ Այդ վէպերի մէջ հեղինակները ձգտում էին ցոյց տալ, թէ ինչպէս մեր ազգային կեանքի պատմական պայմանները ազդել են մեր ազգային բնաւորութեան զարգացման վրայ

լինի մի քօնֆէրանս կազմել արեւելեան խնդրին համար։

Նոյնպէս կը կարծուի որ Սերպիոյ եւ Պուլկարիոյ մէջ երեւան եկած դժուարութիւնները դիւրացնելու համար, Ռուսիան եւ Աւստրիան համաձայնած լինին իրենց մէջ։

Morning-Post կը դրէ թէ Պէռլինի, Վիէննայի եւ Ս. Պեթերբուրգի կառավարութիւնները համաձայնած են մի քօնֆէրանս կազմելու համար Կ. Պոլսի մէջ։ Խորհրդակցութեան նիւթը պիտի լինի թէ ինչ բարեփոխութիւններ պէտք է մտցնել Պէրլինի դաշնադրին մէջ որ Պալքանեան թերակղզոյն մէջ այլեւս չվրդիռնուին այնպիսի դէպքեր որ նորոգի խաղաղութիւնը վրդովին։

ՖՐԱՆՍԱ.

Հոկտ. 18 ի ընտրութիւնները վերջ տուին միապետականներուն ուրախութեան եւ Ֆրանսական ազգին համար միշտ յուսահատ եղողներուն մորմոքելու թեան։

Համրամատականի ճնացած 268 ընտրութիւններէն Հօթ-Կարօն նահանգին մէջ ընտրուելիք մէկ երեսփոխանի մասին որոշ տեղեկութիւն չունինք գեռ։ Ճնացած 267 երեսփոխանական ախոռներէն 241 ը հանրապետականները չահեցան և 26 ը միայն պահպանողականները։

Հոկտ. 4 ին ընտրուած էին 131 հանրապետական. Հոկտ. 18 ին ընտրուեցան 241 հանրապետական։ Ուրեմն ամբողջը կանէ 372 հանրապետական երեսփոխան ընտրուած։

Հոկտ. 4 ին ընտրուած էին 176 պահպանողական. Հոկտ. 18 ին ընտրուեցան 26 պահպանողական։ Ուրեմն ամբողջը կանէ 202 պահպանողական երեսփոխան ընտրուած։

Կը մնան գաղթականութիւններէն լինելիք ընտրութիւնները 9 երեսփոխանի համար և մէկ երեսփոխանի ընտրութիւն ալ Հօթ-Կարօնի մէջ։ Շատ հաւանական է որ այդ ընտրութիւններուն մէջ հանրապետականները չահին։ Արդ, այդ ընտրելիք 10 երեսփոխանն ալ աւելցնելով արդէն ընտրուած երեսփոխանների 372 թուին վրայ, հանրապետականները վաստակած կը լինին 382 ախոռ, մինչդեռ միապետականները 202 ախոռ։ Ուրեմն մօտակայ Խորհրդարանին մէջ 382 ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ և 202 ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ԵՐԵՍՓԻԽԱՆ պիտի դառնուի որ ասել է 180 ՁԱՅՆԻ ԱՒԱԽԻԼՈՒԹԻՒՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԸ։

202 պահպանողականները կը բաժնուին 3 դասակարգի. 1. Ցայսնի Պօնապարթիականներ։ 2. Որոշուած դոյնով միապետականները (Օրլէանեաններ կամ Օրլեանապրականներ)։ 3. Առանց որոշ դոյնի միապետականներ։ Արդ, այս բաժանումով, 202 պահպանողական երեսփոխաններէն 69 ը Պօնապարթիական են, 74 միապետական և 59 անդոյն պահպանողական։

Հանրապետականներն ալ թէեւ իրենց մէջ բաժանումներ ունին. բայց հաւանական է որ առաջիկայ խորհրդարանին մէջ հանրապետական դանագան խումբեր իրարու հետ ձուլին նոր ծրագիրներու վրայ համաձայնելով։

Ուսոի այժմէն չենք կարող որոշապէս ցոյց տալ նոցա բաժանումներուն համեմատ ընտրուած երեսփոխանների թիւը։ Սա այժմ ապահով կառնենք որ արմատական հանրապետականների ներկայացուցած ցանկերի մէջէն 150 անձ երեսփոխան ընտրուած են և 265 անձ ալ, առանց արմատական մակդիրին, հանրապետական անունով միայն ներկայացուած ընտրելիներուն ցանկերէն։

Նախորդ երեսփոխաններէն 293 ը միայն վերստին ընտրուած են որոցմէ 222 հանրապետական են և 71 պահպանողական։ Ուրեմն այժմ 282 երեսփոխան կայ որ դեռ նոր պիտի մնան խորհրդարանը որոցմէ 132 պահպանողական և 150 հանրապետական են։

Սէնի նահանգին մէջ Հոկտ. 4 ին ընտրուած էին միայն հետեւեալ 4 երեսփոխանները. Լօքրուա, Ֆլօքէ, Անդրօլ տը Լաֆօրժ և Պրիսօն։ Այս անգամ ճնացած 34 երեսփոխաններն ալ հանրապետականներէն ընտրուած են. մեծ մասամբ յաւաջադէմ հանրապետականներէն։ Իսկ պահպանողական ընտրելիներէն ամենէն շատ քուէ ստացողը էտ. Հէրվէ 136,280 քուէ միայն կրցած է ստանալ, մինչդեռ հանրապետականներուն 34 րդ ընտրելին, Նշանաւոր Հանրի Ռոշֆոր, Intransigeant ի խմբագրապետը, 247,638 քուէ ստացած է։ Այս ապացոյց է թէ պահպանողականները իրենց աղդեցութիւնը շատ կրճատուցած են Փարիզի և նորա նահանգին մէջ։ Բարիզի մէջ հետեւեալ երեկոյին բոլոր հանրապետական լրագիրներուն խմբագրութիւնները զարդարուած էին դրօշակներով և լուսավառութիւններով. իսկ Gaulois պահպանողական լրագրի խմբագրատունը որ Հոկտ. 4 ի երեկոյին իւր ուրախութեան ցոյցերով դրդուած էր հանրապետականներին, Հոկտ. 18 ի երեկոյին ոչ ծայր կապոյտեան մէջ կը գտնուէր։

Հանրածանօթ նշանաւոր երեսփոխաններէն հետեւեալները յաջողած են վերստին ընտրուիլ Հոկտ. 18 ին Պ. Պ. Պրիսօն, նախագահ պաշտօնեայներուն խորհրդին, ընտրուած Շէր նահանգին մէջ. Ֆլօքէ, նախագահ Խորհրդարանին, Բիւրինէ Օրիանթալի մէջ. Կոպլէ, հանրային կրթութեան նախարար, Սօմի մէջ. Ֆլէսհանօ, արմատական կուսակցութեան պետ, Վարի մէջ. Մարթէն-Ֆէօյէ և Վալտէք Ռուսօ, նախկին նախարարները, Իլլ-է-Վիլէնի մէջ. Ռուվիէ, նախկին նախարար, Այր-Մարիթիմի մէջ. Եւն.։

Նոր խորհրդարանին մէջ տարբերով երկոպդոյնը որ առաջին նիստին կը նախագահէ և բացման սովորական ճառը կը կարդայ, հաւանօրէն կը լինի Պ. Դանիէլ-Լամազիէր որ 81 տարեկան է և արմատական հանրապետական,

ՏԵՂԱԿԱՆ

Հոկտ. 18, կիրակի օր, Մարսէյլի Հայեր հաւաքուեցան մատրան սեղեակը և խորհրդակցեցան ազգին արդի վիճակին և նորա պետքերուն վրայ։

Բաւական վիճաբանելէ յետոյ, ընտրակութիւնը թողուցին մի յաջորդ նիստի որուն հրաւիրելու ժամանակը որոշել և այլ կարգադրութիւններ անել յանձնելին իրենց մէջէն 3 անձի, անուանելով զանոնք «Առաջնահակոյ մասնաժողով հայկական գաղութին ի Մարսէյլ»։

—Հոկտ. 18 ին, ինչպէս Ֆրանսայի այլ նահանգները, Պուշ-Տիւ-Ռոնի մէջ ալ կատարուեցաւ համեմատականի ճնացած 8 երեսփոխանների ընտրութիւնը երկրորդ քուէարկութեամբ։

Այս անգամ միապետականները յաղթութեան բոլորովին և հանրապետականների արմատական կուսակցութեան պատկանող 8 ընտրելիներն ալ ամբողջապէս ընտրուեցան ստուար մեծամասնութեամբ։

Անհատական դէմ առ դէմ կը դնենք բաղդատութեան համար հանրապետականների և պահպանողականների ցանկերուն մէջ նշանակուած 8 ընտրելիներուն ստացած քուէները։

Հանրապետական	Քուէ	Պահպանողական	Քուէ
Ճէյթրալ	56,153	Լը Մէ	37,177
Կրանէ	55,780	Տօմէրկ	36,602
Էյտէ	55,751	Լիւս	36,511
Ճէլըդան	55,290	Կիկու	36,292
Բալի	54,827	Տը Սաբօրթա	36,207
Շըվիյօն	54,772	Տը Պարէմ	35,994
Ֆ. Հիւկ	54,313	Բըմաքիը	35,992
Պուասէ	52,621	Սալվագօր	35,906

Արձանագրուած ընտրողների թիւն էր 139,346. քուէարկուներուն թիւն էր 94331։

Հոկտ. 4 ի քուէարկութեան ժամանակ, Պուշ-Տիւ-Ռոն նահանգին հանրապետականները որ 3 ցանկի վրայ բաժնուած էին, ամենը միասին 62,000 քուէ ունեցած էին. իսկ պահպանողականները 30,000 միայն։ Հոկտ. 18 ին, քուէարկուներուն թիւը դրեթէ միեւնոյն եղած է. բայց հանրապետականները որ մէկ ցանկի վրայ միաբանած էին այժմ, այս անգամ ունեցան 56,000 ձայն որ ասել է նախորդէն 6,000 պակաս. իսկ միապետականները 37,000 ձայն որ ասել է Հոկտ. 4 ի քուէներէն 7,000 ի չափ աւելի։ Ուրեմն այս անգամ միապետականները զանազան միջոցներով դրդած են իրենց մէջէն անտարբերներուն որ քուէ տան և կամ թէ պատեհական հանրապետականներէն մի քանի հազարը չուզելով միանալ արմատականներուն և ընկերվարականներուն հետ։ իրենց քուէները տուած են պահպանողականներուն։ Ինչ որ ալ լինի, Հոկտ. 18 ի քուէարկութիւնը հաստատեց թէ արմատական հանրապետականների կուսակցութիւնը խոր արմատ բռնած է արդէն մեր նահանգի մէջ։

—Թունուզի Պէյին գահաժառանգ եղբայրը Թայիպ պէյ իբր առաւօտ Մարսէյլ մտնելով, նօտայլ պանդոկը լջաւ։ Գլխաւոր փողոցները պտըտելէ յետոյ, երեկոյեան չոգեկառքի դնացքով մեկնեցաւ դէպի Փարիզ։

—Քանի օրէ ի վեր տեղացող յորդառատ անձրեւները երէկ դրեթէ դադրեցան։

—Մէսաժըրի Մարիթիմ չոգենաւին ընկերութիւնը Մարսէյլի և Վառնայի մէջ ուղղակի երթեւեկութիւն սկսած է որով թէ՛ յարաբերութիւնները դիւրացած և թէ՛ ծախքը թերեւցած է։ Ֆրանսական ապրանքները շատ յարմարին Վառնայի մէջ և այնտեղի վաճառականները աւելի յօժար են Ֆրանսական վաճառատուններուն հետ գործ ունենալ քան թէ աւստրիականներուն հետ վասն զի ֆրանսական վաճառատուները աւելի երկար պայմանաժամ կուտան վճարման համար։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

—«Արեւելք»ի մէջ կը կարդանք հետեւեալը.

«Կայսերական հրովարտակաւ՝ Լեւոն Լուսինեան Պէյ անուանուած է անդամ Լրագրական Դիւանի Արտաքին գործոց Նախարարութեան մէջ։

«Լեւոն Պէյ՝ Դեր. Խորէն Սրբազանին եղբօրորդին է, փարիզ ծնած և դաստիարակուած, ուր մեծ յաջողակութիւն ցուցընելով ուսմանց և գիտութեանց մէջ, ստացած է Դպրութեանց ու Գիտութեանց Ասպիճանաւորի վկայական. բայց ի Ծունարէն և Լատիներէն լեզուներէ՝ գիտէ քալ Ֆրանսերէն, Անգլիարէն և Գերմաներէն լեզուները։»

—Վանէն կը գրեն թէ Պ. Յովհաննէս Գազանճեան արձակուեր է բանտէն։ Ա.յդ երիտասարդ որ ընտանիքի տէր է, մի տարիէն աւելի է որ չղիայակապ բանտարկուած կը չարչարուէր այն յանցանքի համար միայն որ մի օր զաւրճութեան համար հրացանը ձեռքին գնացեր էր որսորդութիւն անել Ս. Գրիգորի վանքին չրջակայները։ Կառավարութիւնը որ կը թոյլատրէ քիւրդերին և թիւրքերին արձակ համարձակ սպառազէն պտըտիլ քաղաքամիջի և Ա.յդ եւտանի փողոցները, մի տարի բանտարկութեամբ չարաչար պատժեց և պատճառ եղաւ խանութը փակուելուն և առեւտրական գործերը բոլոր տակնիվրայ լինելուն այդ հայ երիտասարդին որի ձեռքը որսորդութեան մի հրացան գտած էր։

Փաստաբան Պ. Սահակ Գալճեան և այն վանցի երիտասարդներ որոք զանազան ամբաստանութիւններով բանտարկուած և խիստ հարցաքննութիւններուն և տանջանքներուն ենթարկուած են, դեռ կը հեծեծեն բանտերուն մէջ։

—Կ. Պոլսի մէջ ոստիկանութեան կողմէն Ս. Վարդան Մամիկոնեանի պատկերին դէմ հալածանքը նորէն սկսեր է։ Անոնց սրճարաններ և ժողովատեղիներ պտըտելով, Ս. Վարդանի եւն. պատկերները կը փնտուեն և

դատճնուն պէս պատկերն ու իր տերը միատեղ ոստիկանութեան դուռը կը տանին եղեր։

—Կ. Պօլսէն կը գրեն մեզ թէ «Արմէնիա»ին այնտեղ ունեցած նախկին բաժնորդներէն 15ի չափ, ծպտեալ լրտեսների միջոցով տարուեր են ոստիկանութեան դուռը ուր խիստ հարցաքննութեան են ենթարկուեր և իրենց անմեղութիւն ստուգուելէ յետոյ արձակուեր են։ Ոստիկանութիւնը, ի միջի այլոց, հարցուցեր է թէ խմբագրութիւնը այժմ «Արմէնիա»ի տեղ ի՞նչ թերթ կը ղրկէ իրենց թէ ոչ։ և թէ ո՞վ կայ դրամական օգնութիւն անող «Արմէնիա»ի տնօրինութեան որ տակաւին նա կարող է շարունակել իր թերթը։ Մի քանի բաժնորդների վրայ կասկածելով, իրենց նամակներն ալ բացեր են, խմանալու համար թէ արդեօք խմբագրութիւնը իրը նամո՞կ կը ղրկէ թերթը իր բաժնորդներին։ Սակայն ոչինչ չեն գտեր։

Եթէ մի հատարակ քաղաքացի յանդգնի ուրիշի անուան ուղղուած նամակները բանալ, կատաղութիւնը անչուշտ կը պատժէ զայն իրը անիրաւ և ուրիշի անհատական գաղտնիքները յափշտակող մէկը։ Բայց կառավարութիւնները ազատ են, ուզածնին կրնան անել ապահովապէս, վասն զի ոչ ոք կրնայ բողոքել իրենց դէմ և իրաւունքը ուժովինն է։

—Անգլիական Հնդկաստանի կառավարութիւնը վերջնագիր ղրկեր է Պրմանիոյ թագաւորին և հարկ եղած միջոցները ձեռք առեր է անգլիական պիրմանիոյ պահպանման զօրքերի թիւը ատաւպատնելու համար։

—Սըր Տըմմինիա Վօլֆ և Մեծ Եպարքոս Քեամիլ փաշան Անգլիոյ և Թիւրքիոյ կողմէն իրենց համաձայնութիւններս ստորագրած են, Եգիպտոսի նկատմամբ եղած կարգադրութիւններն մտնին։ Այժ պայմանագրի յօդուածներէ մին կը պահպանէ որ եգիպտական զօրաբանակին մէջ օսմանեան զօրքեր ալ գտնուին և զինուորական պայմանները թէ՛ անգլիական թէ՛ թիւրք լինին։

—Գ. Վատինկտօն, Ֆրանսական դեսպան ի Լօնտօն, հրաժարած է իր պաշտօնէն։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ 13 ԼՆ ՀՈԿՏ. 20

ՆԵՐԱՔՈՒԹԻՒՆ

==

ԲՈՒՐԴ. Հրապարակի դրութիւնը անվոփոխ է, չարթուս վաճառումը նեղը 1300 հակի մօտ են օրմէ կը նշանակեմք, 300 հակ առաջին կըտրում կիւրճիի ապրանք B 125, BS 105 և GC 85 ֆր. 200 հակ ընտիր առաջին Նուխա 87½ ֆր. 50 հակ թէքըէմէ GC 73½ ֆր. 50 հակ Թարթար GS 60 ֆր. 50 հակ Սիրիոյ ապրանք 110 ֆր. 150 հակ Հալէպի լուացուած ճերմակը 182½–195 և սեւերը 125–140 ֆր. 100 քիլօն։

ԲԱՄԲԱԿ. Հրապարակը անշարժ է, նոր ապրանաց համար հետեւնալգնահատումները կըլլան. Զմիւռնիոյ Սպուճա 60 և Քըրք ապաճ 58 ֆր. Ատանա և Թարսուսի ապրանքները ըստ տեսակին 50–55 ֆր. Պարկատանի բամպակ 47½ ֆր 50 քիլօն։

ՄԵՏԱՔՍԵՂԷՆ. Ընդհանուր թուլութեան մէջ այս օրերս ուշէնեալ վերայ մի քիչ պահանջ կերեւի. չարթուս վաճառմանց մէջ կան մեռոտ 10 հակ Սիրիոյ 45–48 ֆր. 2 հակ Պրուսայի 45 ֆր. ուշէնեալն 2000 քիլօ Պրուսայի Ֆրիզոն 8 ֆր. 2000 քիլօ Նախայի Ֆրիզոն 7½ ֆր. 600 քիլօ Նախայի չխար 2,60 ֆր. և Նախայ Թոնիթալը կարժէ 3,70 ֆր. քիլօն։

ԿԱՆԵՓ. Ապրանքի պակասութեան պատճառաւ գիները կը բարձրին, Նախալէպի ապրանքներ 53–62 և Զմիւռնիա 56–57 ր. 100 քիլօն։

ՑՈՐԵՆ. Թոտ հատատ է, մանաւանդ կարծր տեսակները չատ կը փնտռուին. Ռուսիոյ ապրանաց գիները Պէրտիանցկա 18–19, Բոլշիա 19½, Սպեմ Սզօֆ 18½–19, Սպեմ Նիքօլայէֆ 19½–20½, Կիըբա Օսէսա 18½ ֆր. և Տաճկաստանի ապրանքներէն Բաատմոյ 18–18½ Սամսուն և Տրապիզոն 16–18 ֆր. 100 քիլօն։

ՎԱՐՍԱԿ (avoine). Միշտ պահանջ կայ, մանաւանդ մաքուր ապրանքներու. Ռուսիոյ տեսակները 16, Զմիւռնիա Ռուսաճիոյ և Պանդրմա 15½ Սամսուն 13–14½ ֆր. 100 քիլօն։

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ (maïs). Ըստ տեսակին 12½–12¾ ֆր. 100։

ԳԱՐԻ (orge). 10–12½ ֆր. 100 քիլօն։

ԼՈՒԲԻԱ. Գիները միշտ կոտրելու հակում ունին, Տրապիզոնի զատուած նոր ապրանքները պատրաստ 29½–30 ֆր. ապայանձնելի 27–28 ֆր. 100 քիլօն։ Սպաղայինն վերայ յոյս չերեւիր։

ԿԱՆԵՓԻ ՀՈՒՆՏ (graines de chanvre). Օսէսա և Տանուբի ապրանքներ 26–27 ֆր. Իւնեա և Յամիցայի տեսակները 32 ֆր. 100 քիլօն։

ԹՌՉՆԱԿՆԵՐ (alpiste). 25–25½ ֆր. 100 քիլօն։

ՇՈՒՇՄԱՆ (sésames). Թոյլ է և գիները մի քիչ կոտրած. Թարսուս և Ատանայի պատրաստ նոր ապրանքները 42½ և Եաֆայի տեսակը 43½ ֆր. 100 քիլօն։

ԽԱՇԽԱՇ. 28–29 ֆր. 100 քիլօն։

ԿՏԱՒԱՀԱՑ. Պահանջը ուեւլցած է, 27½ ֆր. 100 քիլօն։

ԿԱՂԻՆ. Միշտ թոյլ է, 34 ֆր. կոտրած կտրին պատրաստ 96 ֆր. 100 քիլօն։

ԾԻՐԱՆԻ ԿՈՒՏ. Լաւ ապրանքները 56–58 ֆր. կարժէն 100 քիլօն։

ԴԵՂՆԱՀԱՑ. Բնաւ գործ չըլլար օրուան գին 110–125 ֆր. 100 քիլօն։

ՄԵՂՐԱՄՈՄ. 160–170 ֆր. 50 ք։

ԱՃԻՒԻ ՄՈՐԹ. Փիչ չատ վաճառումը ներ կըլլան, հիները 27–33 և նորերը 31–36 ֆր. տուզինան։

ՈՋԻԱՐԻ ՄՈՐԹ. Տաճկաստանի ապրանք 60–65 և Տփխիսի տեսակները 55 ֆր. 100 քիլօն։

ԳԱՒԱՆ ԵՒ ՈՒԼԻ ՄՈՐԹ. Տուզինան 12–18 ֆր.։

ՆԱՊԱՍՏԱԿԻ ՄՈՐԹ. Փիլօն 3,30 էն 4 ֆր. ըստ տեսակին։

ԱՐՏԱՔՈՒԹԻՒՆ

==

ՇԱՓԱՐ. 3 քիլանոցը 60 և 2 քիլանոցը 61 ֆր. 100 քիլօն։

ՍՈՒՐՃ. Հատատ է, Բիօխ ապրանքներ 47–59 ֆր. 50 քիլօն։

ՈՐԴԱՆ ԿԱՐՄԻՐ. Անփոփոխ, ճերմակները 3,40–3,60 և սեւերը 3,50 –4,20 քիլօն։

ՊՂՊՂՋ. Բարձրութիւնը կը չատնակէ, Սեպտեմբերի ապրանքը կարժէ 100 ֆր. 50 քիլօն։

ԲՐԻՆՋ. Ճէնովայի մէջ 31–36 ֆր. 100 քիլօն։

ԿԱՊԱՐ Ֆլուշի տեսակը 28½, կլոր և Թերթի 34 ֆր, 100 քիլօն։

ՊՂԻՆՋ. Թերթիկ 140, կլորը 150 և Եւրոպիոյ ապրանքները 105 ֆր. 100 քիլօն։

ՋԻՆՓՕ. 50 ֆր. 100 քիլօն։

Գ.

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ԹՄԲԱԳՐԱԿԱՆ ԱԶԴ

Հեղինակներ կամ թարգմանիչներ որք կուզեն որ իրենց գործերն վերայ գրագատում հրատարակուի Արմենիայի մէջ, պէտք է որ երկու օրինակ ղրկեն իրենց դիքէ. մէկը խմբագրատան մէջ պահուելու համար, միւսն ալ Ռուսիա ղրկուելու համար մեր գրագատ աշխատակցին։

Վիմագրութեան մի մասնիլ, փօմաճ Փօլօմպիէ (93/65), իրեն վերաբերեալ պիտոյքներով ծախու հանուած է։

Ուզողը կրնայ դիմել Արմենիայի ապարանը։

ՄԱՆՈՒԷԼ ՄԻՐԱՆՈՐԵԱՆ

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՀԱՅՕՐՆԱԿ ԳԱՒԱՌՍ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՆ ՍԱՐԼԷՆ ԵՒ ՁՈՐԷՆ ՀՆԷՆ ԵՒ ՆՈՐԷՆ ՊԻՏԱՆԻ ԳԻՏՆՈՑ

==

Մասն Ա. Բ. Գ. (առարտ)

Հայաբնակ գաւառաց ընդհ. նկարագրութիւնն, տեղագրութիւնն, աշխարհագրութիւնն, չէն և ամայի վանօրէից նկարագիրն, աւանդութիւնք և այլ նիւթեր պարունակող Ա.ղգ. գործ մի է, ամենակարեւոր և հետաքրքրական գրուած չրջահայեաց և շատ նուրբ տեսութեամբ արժանի ամեն Հայու յաճախակի վերծանութեան։

Կը գանուի բոլոր գրավաճառաց քովկեդրոնատեղին է Պօլիս Պահճէ-գափու հացագործի վառան դէմ Գ. էֆ. Ճոնեանի վաճառատուն, թիւ 11։

Գինն — Ա. և Գ. մասերն 8 ախճ, իսկ Բ. մասն 10 դահեկանի։

Վարժարանաց համար գոհացուցի զեղչ կը լինի, և յանձնարարութիւնք հղուին կը կատարուին։

JOHN SARKIS

PAPASIAN

PAPETERIE — LIBRAIRIE

Magasin de Musique

RUE FRANQUE, PASSAGE CRAMER, 1

SMYRNE (Turquie d'Asie)

Fournitures pour Consulats, Agences, Bureaux, Écoles, etc.

Articles pour Photographes, peintres et ingénieurs.

Cartes Géographiques et maritimes, Plans de Smyrne et photographies (vues) de différentes villes de l'Asie-Mineure.

Reliure en tous genres, et Commissions de travaux d'imprimerie.

Tablaux, Corniches, Baguettes. *Encadrements* avec soin et précision.

Grand assortiment de Musique des plus renommés éditeurs et *Seul Dépôt* des éditions économiques de Ricordi, Peters et Litolff.

Instruments à Cordes, Pupitres-musique, Cordes pour Violon, Guitarre, Mandoline et Piano des meilleures fabriques d'Europe, etc., etc.

On se charge de toutes sortes de Commissions.

ՏՆՕՐԻՆ—ԼՄԲԱԳԻՐ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

Հայերիս տպարան Մ. Փորթուգալեանի

ՄԱՐՍԷՑԼ

Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.

ԱՐՓԻՔՆԻԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ՄՕՆՓԷԼԻԷ. —Հայ ռուսահոդական ակումբ. Նամակը կը հրատարակուի առաջիկայ թերթին մէջ։

Շնորհակալութեամբ կը հրատարակենք միշտ ձեզ ուղղուած հողագործական հարցերին պատասխանները երբ կատճառօտ և հետաքրքրաշարժ կերպով գրուած են։

ՓԱՐԻԶ. —Ս. Ն. Սատանք ձեր ղրկած դումարը և ղրկեցինք թերթերը Լօնտօն ձեր նշանակած հասցէին։

ՌՈՒՍՃՈՒԿ. —Ն. Ֆ. Լրագիրը ապուելու ժամանակ սատանք ձեր քարտէզ։ Ուրիշն պատասխանը կը մնայ յաշորդ թուին։